

Մեծիկ-Սարգսյան

---

Սարգսյան Կարպիս

891.995

Վ-48



391.542-93-9  
Պ- 48

ԱՐՑ. Պ. ՄԵԼԻՔ-ՄԵՍԹԻՍԵԱՆ

# ՍՈՒՐԵՆԻ ԿԱՐԴԱԼԸ



ՄԱՆԿԱԿԱՆ ՊԻԷՍ ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



ԹԻՖԼԻՍ

Բաժանմանը «ՊՐՕԳՐԷՍ» տպարանի, Դժոբյ., տ. Վրաց. Աղ.  
1911





# ՍՈՒՐԵՆԻ ԿԱՐԴԱԼԸ

Մանկական պիէս մէկ գործողութեամբ

Արտ. Պ. Մելիք-Մատթէոսեանի

ԳՐԹՈՂ ԸՆԶԻՄ

ՅԱՐՈՒԹԻՒՆ—(հայր) . . . . .

ԱՆՆԱ—(մայր) . . . . .

ՍՈՒՐԷՆ—(սրբին) . . . . .

ԱՇՈՏ—(Սուրենի ընկերը) . . . . .



Բեմը պատկերացնում է միջին դասակարգի ընտանիքի տուն: Զա-  
խը մի դուռ, դէպքի փողոց: Մէջ տեղը դրած է մի սեղան, սփռոցով  
ծածկած, վրան մի քանի կտոր հաց: Ազատ անկիւններում աթոռ-  
ներ: Աջ անկիւնում դրած է մի փոքրիկ սեղան, վրան դարձած  
գրքեր:

## Տ Ե Ս Ի Լ Ի.

(Ներս է մտնում Սուրենը դանդաղ քայլերով, պայտասկը  
ձեռքին):

Սուրեն.— Բոլորովին յոգնեյ եմ ուսումնարանի գնա-  
լուց (պայտասկը դէն ձգելով): Ի՞նչ է, ամեն առաւօտ  
պիտի շուտ վեր կենամ տեղիցս, թէ ի՞նչ է գնում եմ  
ուսումնարան. դեռ բաւական չէ այդ, սոված պիտի մնամ  
մինչև ժամի երկուսը, երեքը: Ո՛չ, այսուհետեւ էլ չեմ  
գնալու ուսումնարան: Արի մի հնար ստեղծեմ երկուշաբթի  
օրւայ համար: Երկուշաբթի առաւօտը վեր կենալիս սուտ-  
սուտ փորիցս կըբռնեմ և կըսկսեմ բարձր ձայնով գոռալ, թէ  
փորս շատ սառտիկ ցաւում է: (Գլխին խփելով). այ քեզ խեղճ  
գլուխ, լաւ մտածեցի: Իհարկէ ծնողներս հէնց կըկարծեն  
թէ ճիշտ որ փորս ցաւում է և չեն թողնիլ գնամ ուսում-  
նարան: Ի միջի այլոց և կասեմ, որ գլուխս էլ է շատ  
սարսափելի ցաւում, այն ժամանակ նրանք բոլորովին  
կըհաւատան, որ հիւանդ եմ: (Դարձնալ գլխին խփելով).  
այ քեզ գիտնականի գլուխ, լաւ հնարեց: Հիմա ոչինչ,  
գնամ ընկերներին հետ խաղամ: Վաղը մինչև երեկոյ չեմ



հիւանդանալ, իսկ երեկոյեան թէյի ժամանակ արդէն կըսկսեմ անքանքալ կըզոռամ, վա՛յ գլուխս, վա՛յ փորս, վա՛յ մեռայ: Իսկ նրանք սիրաները կըճաքացնեն և կասեն՝ այսօր մնայ տանը, կըզնաս ուսումնարան աւելի կը հիւանդանաս: Եթէ այս անգամ փորձս յաջող անցաւ, ուրեմն բախտաւոր եմ, երբ չըցանկանամ ուսումնարան գնալ, իսկոյն հնարած փորձս գործ կածեմ: Քանի որ մայրիկը գեռ չի եկել, ես գնամ խաղամ: (Մի կտոր հաց է վերցնում): չի խանգարել այս կտոր հացը հետս վերցնեմ, այնտեղ կուտեմ: (Գնում է):

## Տ Ե Ս Ի Լ II.

Ա. Ն. Ն. Ա. (մանկու)

Ա.Ն.Ն.Ա.—Դարձեալ անպիտանը չի խրատել: Ամեն օր պատուիրում եմ, երբ ուսումնարանից տուն ես գալիս, նստիր ճաշդ վերջացրու, այնուհետեւ ուր որ գնում ես գնայ: Զարմանալի երեխայ է, բոլորովին չի զգում որ իրեն ես ասում: ամեն օր միենոյն խրատը: Արքան ծեծում եմ, պատժում եմ, բայց յիմարի գլխում բոլորովին չի մտնում, կարծես թէ նա չի պատժել: Իհարկէ, այդպէս որ մնայ փողոցին կընտելանայ: Մի հայր ունի, կարծես, իրեն ժառանգը չէ. մի անգամից մի անգամ չի լինում, թէ աղանջներից մի լաւ ձգի, կամ լաւ դաստիարակի, որ իրեն գործին զգոյշ լինի. իհարկէ նա էլ երեխայ է, հէնց այդպիսի մի բանի է սպասում, ինչ մեղադրեմ նրան: Երեւալայէք, հոգիս այստեղ է հասել (ցոյց տալով կոկորդը): Չեմ իմանում ինչպէս վարեմ այդ անպիտանի հետ: Տօ՛, յիմար, երբ գրիմագիտից գալիս ես տուն՝ ճաշիր, հանգստացիր մի փոքր, այնուհետեւ նստիր դասերդ պատրաստիր էլի: Ասում են գայլի գլխին աւետարան կարդացին, բայց նա չըհամբերելով ասեց «չուտ արն, ոչ խորաները տարն անցնում են», նոյնն էլ մեր այս անպիտանն է: Կարծես գիրքը նրան ուտելու, խեղտելու է: Աւելի լաւ է հօրը դանգաւում, թող նա ինչպէս ուզում է, այնպէս էլ անի: (Կանչում է). Յարութիւն, Յարութիւն, մի արի այստեղ: (Ներս է մտնում Յարութիւնը):

## Տ Ե Ս Ի Լ III.

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչ էիր ուզում ասել:

Ա.Ն.Ն.Ա.—Իսէր Քրիստոսի, գնա մի Սուրէնի աղանջներից բռնած քաշ տուր բեր, թէ չէ խայտառակութիւն է կատարեալ, ամբողջ օրը նա փողոցումն է լինում. նրան պիտի պատժել: Բոլորովին չի ուզում լսել: Ինչպէս պիտի պատմի դասերն ուսուցչին. վերջապէս ամօթ է մեզ

համար: Երբ հարցնում եմ՝ այսօր ինչ թանշաններ ես ստացել, պատասխանում է, բայց մշտական ընդհակառակն է դուրս գալիս, «մէկ» կամ «երկու» ոչ աւել դրանցից: Բաւական չէր անցեալ տարի մնաց միկնոյն դասարանում, ցանկանում ես այս տարի էլ մնայ: Եթէ մնայ երրորդ տարին էլ, չէ՞ որ նրան կըվռնդեն, իսկ այդ պատուաբեր չէ մեզ համար:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Ի՞նչ անեմ ես այդ վուշ կենդանուն, ի՞նչպէս վարեմ հետը: Իսէր Աստծոյ, իմ գլուխս ցաւում է, ես գլուխ չունիմ դրա հետ ճաքացնելու: Գնա՛, ինչոր կարողանում ես, այնպէս էլ արա: Անպիտանը կարծես թափառաշրջիկ լինի: Քարը գլուխը, որ պատիւը չի հասկանում: Այնքան զգւացնում է, որ էլ ուսում չըտամ, այլ մի քանի խոգեր, աւանակներ առնեմ ու տամ արածացնէ:

Ա.Ն.Ն.Ա.—Այո, խրատելու տեղը դու մշտական այդ ես ասում: Զրգիտես որ երեխան մշտական հօրիցն է երկիւղ կրում: Զրպատահեց ինձ մի անգամ տեսնել, որ դու նրան կանչես քեզ մօտ խրատես, այլ մշտական պատճառներ ես առաջ բերում, կամ գլուխս է ցաւում, կամ ժամանակ չունիմ, վերջապէս հրաւիրւած եմ այն ինչ տեղը և այլն: Զարմանալի մարդ ես, միթէ քո երեխան չէ, վերջապէս դու պէտք է հոգաս նրա մասին, այլ ոչ թէ մի օտարը:

ՅԱՐՈՒԹԻԻՆ.—Դու էլ մի կողմիցն ես գլուխս ցաւացնում: Բաւական է. խնդրում եմ: Ես յոգնել եմ ձեր ձեռքից: (Տողիցը վեր է կենում ու գնում իրեն սննեակը):

Ա.Ն.Ն.Ա.—Ա՛յ քեզ հոգատար հայր, չի ցանկանում գլուխը ցաւացնել: Լա՛ւ, ես կիմանամ այսուհետեւ ինչպէս վարեմ նրա հետ: Դարձեալ գնամ որոնեմ այն անպիտանին: (Գնում է):

## Տ Ե Ս Ի Լ IV.

(Ներս են մտնում կարճ ժամանակամիջոցից յետոյ Աննան և

Սուրէնը)

Սուրէնը 3

Ա.Ն.Ն.Ա.—Սուրէն, քեզ հագար անգամ պատուիրել եմ, երբ ուսումնարանից վերադառնում ես, ճանապարհին մի աշանալ, իսկ դու միշտ ընդհակառակն ես անում: Այսօր դու եկել ես տուն ուղիղ ժամի 4-ին, թէ ինչո՞ւ, ես չը գիտեմ. ապա մի պատմիր, ուր էիր:

ՍՈՒՐԷՆ.—(Կզկզայով) Ուսումնարանում, թէ... Ոչինչ: Ես ոչինչ, մայրիկ:



ԱՇՈՏ.—Շնորհակալ եմ, տիկին, առայժմ աջող են, յոյսով եմ, որ մինչև վերջն այսպէս անցնեն:

ԱՆՆԱ.—Սիրելի Աշոտ ես մի բան կը խնդրէի քեզնից:

ԱՇՈՏ.—Պատրաստ եմ ձեր խնդիրը կատարելու:

ԱՆՆԱ.—Եթէ ձեզ այսօր մի այնպիսի գործ չուէք, խնդրում եմ Սուրէնի հետ միասին պարապէք, դուք խաղը մի փոքր մոռանայ:

ԱՇՈՏ.—Շատ լաւ, մեծաւ ուրախութեամբ:

ԱՆՆԱ.—Խնդրում եմ: Ես գնամ միւս սենեակը, որ ձեզ չըխանգարեմ: (Գնում է):

ՍՈՒՐԷՆ.—Այդ լաւ եղաւ: Նա էլ չի գայ այստեղ: Հիմա կարող ենք գնալ: Դիտես ի՞նչ, Աշոտ, գնանք մի թեթեւ ման գանք փողոցում:

ԱՇՈՏ.—Ուրեմն չըլտեցիր մօրդ տւած պատէրը, որ...

ՍՈՒՐԷՆ.—Ի՞նչ «որ», ես արդէն պատրաստել եմ: Այս օրւայ դասերը շատ քիչ են: Ուղիղ երկու ժամ է, որ պարապւում եմ այս նեղ սենեակում:

ԱՇՈՏ.—Ո՛չ Սուրէն, դու քո վարմունքով մօրդ կարող ես վիրաւորել: Ես կարծում եմ դու էիր պատճառը, որ մայրդ ինձ խնդրեց մնալ քեզ մօտ, իսկ դու ոտնաձուլ ես տալիս նրա պատէրը: Ինձ համար ոչինչ, կարող եմ գնալ, քանի որ ես արդէն պատրաստել եմ դասերս, իսկ քեզ համար՝ երբ չըզիտես, անհրաժեշտ է սովորել:

ՍՈՒՐԷՆ.—Ես արդէն գիտեմ դասերս:

ԱՇՈՏ.—Սուրէն, երբ գիտես դասերդ, խնդրում եմ պատմես ինձ, եթէ կարելի է:

ՍՈՒՐԷՆ.—Զարմանալի աղայ ես դու, կարծես հաւատ չես ընծայում ինձ:

ԱՇՈՏ.—Ես խոստումս պիտի կատարեմ: Ես կարծեմ քո մօտ խօսք տւի մօրդ:

ՍՈՒՐԷՆ.—Այդպէս է, այո, ճիշտ ես ասում, խօսք տւիր:

ԱՇՈՏ.—Ուրեմն, ես հնարաւոր չեմ ստել իմ տւած խօստումս:

ՍՈՒՐԷՆ.—Դու գիտես, կուգես նստիւր այստեղ, իսկ ես գնում եմ գրօնելու:

ԱՇՈՏ.—Կը փոշմանես Սուրէն, եւ ամօթ է քեզ համար: Մի գժւար բան չէ դասեր սովորելը. բաւական է նստես մի ժամ, այնուհետեւ կանոնաւոր կը սովորես դասերդ: Այն ժամանակ եւ թէ դու եւ թէ մայրդ հանգիստ կը լինէք: Բաւական է, որքան մենք մինչև ուսումնարան գնալը խաղացել ենք, հիմա հարկաւոր է սիրելիս, պարապել: Դու...

ՍՈՒՐԷՆ.—Ես ոչինչ չեմ հասկանում, ոչ «դու», ոչ «ես», ոչ «գասեր»: Ես գնացի: (Բանում է դուրսելով):

ԱՇՈՏ.—Ի՞նչ սարսափելի գրութիւն է: Ա՛յ քեզ իս-

կական անխելք աղայ: Անպիտանը լաւ ախօռտպետ կը դառնայ վերջի վերջոյ: Ամբողջ օրը փողոցներումն է լինում, այն կեղտոտ ախոռի մօտ խաղալիս: Ի՞նչ պիտի պատասխանեմ հիմա նրա մօրը, չըզիտեմ: Անշուշտ մայրը ինձ չի մեղադրի: (Ներս է մտնում Աննան):

## Տ Ե Ս Ի Լ VII

ԱՆՆԱ ԵՒ ԱՇՈՏ:

ԱՆՆԱ.—Այդ ուր կորաւ Աշոտը, այն անպիտանը: Ա՛յ քեզ ծոյլերի թագաւոր: Հիմա էլ այս խեղճին խնդրել եմ, որ միասին պարապեն, բայց այն անպիտանը, խեղճին թողել ու գնացել է: Ներիւր Աշոտ:

ԱՇՈՏ.—Հէնց նոր դուրս եկաւ նա, չուզեց սովորել: Ի հարկէ նրա կողմից անբարեխղճութիւն է: Ես գնում եմ:

ԱՆՆԱ.—Ներիւր Աշոտ, որ քեզ անհանգստացրի, խնդրում եմ, կարող ես գնալ:

ԱՇՈՏ.—Ոչինչ, բայց դուք տիկին անհանգիստ մի լինիք: Ես նրան կասեմ, որ այդպէս չի կարելի վերաբերւիլ դէպի դասերը:

ԱՆՆԱ.—Խնդրում եմ: Նրան բնկերական խրատներով համոզեցրու, որ այդ ճանապարհը կորուստի ճանապարհն է:

ԱՇՈՏ.—Շատ բարի: Յաեսութիւն: (Չնոր է տալիս ու գնում):

ԱՆՆԱ.—Զարմանալի երեխայ է, ոչ մի նշոյլ պատուասիրութեան: Դռնէ այն երեխայից օրինակ վերցնէք: Ա՛յս Աստուած, վերջապէս ինչ միջոցներ ձեռք առնեմ, որպէսզի այդ անպիտանը խելքի գայ: Գիշեր ու ցերեկ հանգստութիւն չունիմ: Կեանքս ուղղակի խաւարեցրել է այդ յիմարը: Մինչև նա մարդ կը դառնայ, իմ հօգիս մինչև այդ ժամանակ դուրս կը գայ: Ուրիշ հնար չըկայ գնամ ականջիցը քաշելով նրան բերեմ, որպէսզի ամաչի: (Գնում է):

## Տ Ե Ս Ի Լ VIII.

(Ներս է մտնում Յարութիւնը)

ՅԱՐԱԹԻՒՆ.—Դարձեալ խեղճ Աննան երեի նրան է որոնում, այն փուչ կենդանուն: (Ժողովրդին) Խեղճ մայրը գործից զրկւած նրան է խրատում մշտական, բայց ամպիտանի գլուխը չի մանում: Ծիշտ է ասում Աննան, ես բոլորովին ուշադրութիւն չեմ դարձնում նրան: Լաւ. ես կիմանամ նրան այս բոլորէին... (Մի փոքր լռելոց յետոյ):



Ամբողջ մի երկու օր է, որ խեղճը խնդրում է իրեն մօտ, բայց չեմ կարողարում: Ես գնամ նրա մօտ. իրիկունը հաւանական է ընթրիքին մնամ մօտը: Լաւ, այդ ժամանակ վաղը ես մեր յիմարի հետ կըխօսեմ: (Գլխարկը վերցնում է ու զնում): (Ներս է մտնում Աննան Սուրենի ականջից ընկած):

## Տ Ե Ս Ի Լ IX.

### ԱՆՆԱ ԵՒ ՍՈՒՐԵՆ

ԱՆՆԱ,—Ուրեմն ես, որ խնդրում էի քեզ անդադար, կառաւիյներ էի անում: (Ականջից ձգելով):

ՍՈՒՐԵՆ.—(Սարսափելի գոռում է) Ներքի ինձ, մայրիկ, այսուհետեւ լաւ կըսովորեմ:

(Երեխաները դռան նստից) Ընկերներ, լսեցէք Սուրենի կարգալը: Կեցցես Սուրեն, լաւ ես կարգում, լաւ ես գոռում: (Ժաղրելով) Այ քեզ լաւ կարգացող:



<< Ազգային գրադարան



NL0402289





96702 7 009.

1



11177